DOI: 10.61760/18290108-bsr.25.3-9

ՌԴ ԶՈՒ-Ի ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԱՄՆ-Ի ԶՈՒ-Ի ՀԱՄԱՏԵՂ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Ա. Ս. ԲԱՂՂԱՆՅԱՆ, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս, Է. Կ. ՍԱՐԿԻՍՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի ավագ գիտնական-վերլուծաբան



Ներածություն

21-րդ դարում պատերազմների դինամիկան և ինտենսիվությունը կտրուկ կերպով փոխվել են՝ պայմանավորված տեխնոլոգիական առաջընթացով և բազմատիրույթ օպերացիաներով: Ներկայումս էլ օպերատիվ արվեստը ռազմավարությունն ու մարտավարությունը կապող կարևորագույն օղակն է:

Օպերատիվ արվեստը ռազմական արվեստի հիմնարար տարրերից մեկն է, որով սահմանվում են զորքերի կիրառման ձևերն ու եղանակները օպերատիվ մակարդակում: Ըստ այդմ՝ զորամիավորումների օպերացիաների նախապատրաստման և վարման ժամանակ տեսությունն ու պրակտիկան հիմնվում են օպերատիվ արվեստի սկզբունքների վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր պետությունների բանակներում օպերացիաների նախապատրաստման ու վարման ժամանակ կիրառվում են այնպիսի ղեկավար սկզբունքներ, որոնք էականորեն տարբեր են, ինչը պայմանավորված է ձևավորված ավանդույթներով, ռազմական արվեստի զարգացման մակարդակով և այլ պայմաններով: Սակայն հարկ ենք համարում նշել, որ ձևավորված սկզբունքների մի մասն ունի տրամաբանական նմանություն:

Այսպես. ըստ ամերիկյան ռազմական մտքի՝ օպերացիաների սկզբունքները ցանկալի հատկություններ են, որոնք պետք է ներդրվեն բոլոր պլաններում, օպերացիաներում և ուղղակիորեն կապված են զորքերի օպերատիվ հայեցակարգի կիրառման եղանակների հետ: Հրամանատարները դրանք օգտագործում են ամբողջ օպերատիվ գործընթացում օպերացիաների զա-

* Հոդվածն ստացվել է 30.06.2025 Հոդվածի գրախոսությունը ստացվել է 15.08.2025:

նազան տարբերակներ վերլուծելու և գնահատելու համար: Որքան ավելի շատ է օպերացիան համապատասխանում այս սկզբունքներին, այնքան մեծ է հաջողության հավանականությունը[1]:

Օպերատիվ արվեստի սկզբունքները օպերացիաների (մարտական գործողությունների) պատրաստման ու վարման, զորքերի (ուժերի) ղեկավարման ուղղությամբ պրակտիկ գործողությունների վերաբերյալ առավել ընդհանրական, գիտականորեն հիմնավորված դրույթներ, կանոններ, հանձնարարականներ են[2]: Դա ռազմական փորձի գիտական ամփոփումն է, որն առավելագույնս նպաստում է կոնկրետ իրադրությունում օպերացիաների նպատակների իրագործմանը:

Սույն հոդվածի նպատակն է ՌԴ ԶՈՒ-ի օպերատիվ արվեստի (օպերացիաների) սկզբունքների և ԱՄՆ-ի ԶՈՒ-ի համատեղ օպերացիաների սկզբունքների համեմատությամբ որոշարկել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները և գնահատել այդ սկզբունքների կիրառելիությունը ժամանակակից պատերազմներում՝ ռազմաքաղաքական միջավայրի փոփոխումների հաշվառմամբ:

Ուսումնասիրության շրջանակում կիրառվել է բովանդակային համեմատական վերլուծության մեթոդը, որի հիմքով ուսումնասիրվել են ՌԴ ԶՈՒ-ի օպերատիվ արվեստի սկզբունքները և ԱՄՆ-ի ԶՈՒ-ի համատեղ օպերացիաների սկզբունքները կառուցվածքային, գաղափարական և կիրառական մակարդակներում: Համեմատությունը կատարվել է սկզբունքների նպատակային նշանակության, ներքին տրամաբանության և դոկտրինալ հիմքերի համատեքստում, ընդսմին վերլուծության կիզակետում դրվել են ռազմավարական ուղղվածությունը, կիրառման համատեքստը և գաղափարական առանձնահատկությունները:

ՌԴ ԶՈՒ-ի օպերատիվ արվեստի սկզբունքները

Զորքերի մարտական ու զորահավաքային պատրաստության պահպանման սկզբունքը շարունակում է մնալ օպերատիվ արվեստի հիմնարար տարր անգամ արդի պայմաններում[3]: Այն ուղղված է ապահովելու ԶՈՒ-ի կարողությունը արագ փոփոխվող իրադրության պայմաններում օպերատիվ կերպով արձագանքելու ժամանակակից սպառնալիքներին: Բարձր աստիճանի մարտական պատրաստականությունը ինքնին հակառակորդի զսպման գործոն է: Գիտակցելով զորքերի անմիջապես արձագանքելու պատրաստությունը՝ հավանական հակառակորդը սակավ է հակված լինում հանկարծակի ագրեսիայի: Ժամանակակից հակամարտություններում այս սկզբունքի պահպանումը մնում է հիմնարար սկզբունք:

[1] Տես “FM 3-0. Operations”, Headquarters Department of the Army. Washington, D.C., October 2022, P. 3-6 (https://irp.fas.org/doddir/army/fm3-0.pdf):

[2] Տես «Оперативное искусство сухопутных войск». Учебное пособие. М., 2016, с. 59:

[3] Տես նույն տեղում, էջ 65:

Գործողությունների ակտիվությունն ու վճռականությունը հնարավորություն են տալիս տիրելու նախաձեռնությանը՝ հակառակորդին զրկելով հարմարվելու և դրանով իսկ ժամանակ և տարածություն շահելու հնարավորությունից: Դրանք միասին ապահովում են օպերացիաների դինամիկ և վստահ կառավարումը, հատկապես՝ արագ փոփոխվող իրադրությունում:

Այս հատկանիշները հիմնարար են օպերացիաներում հաջողության հասնելու համար և մարտական գործողությունների ժամանակ հրամանատարներից պահանջում են դրսևորել ճկունություն, խորաթափանցություն և հակառակորդի գործողությունները կանխատեսելու ունակություն, արձագանքման արագություն և հոգեբանական առավելություն, ինչը վերջին հաշվով կարող է բերել վճռական հաղթանակների:

Զորքերի, ուժերի և միջոցների համաձայնեցված կիրառումը և սերտ փոխգործությունը ժամանակակից հակամարտություններում մնում են առանցքային, թեև այս սկզբունքի իրագործումը բարդացել է տեխնոլոգիական փոփոխությունների և մարտական գործողությունների նոր ձևերի պատճառով: Այն համատեղում է բոլոր զորատեսակների, զինված ուժերի տեսակների և ուժային կառույցների զորքերի համալիր կիրառումը: Այս սկզբունքը ոչ միայն գործում է ժամանակակից օպերացիաներում, այլև դարձել է դրանց կառավարման հիմնական տարրը: Տարբեր տեսակների զորքերը և զորատեսակները գործում են ոչ թե մեկուսի, այլ համակարգվում են ժամանակի իրական մասշտաբում՝ ջանքերը միավորելով մեկ օպերատիվ նպատակին հասնելու համար, և ապահովում են գործողությունների համաժամանակությունը, ճկունությունը և հարմարվողականությունը:

Վճռորոշ պահին գլխավոր ուղղություններում և կարևոր խնդիրների լուծման համար ջանքերի կենտրոնացումը, առաջին հերթին, ուժերի կենտրոնացումն է օպերացիայում շրջադարձային պահի հասնելու համար: Այժմ դա արվում է նոր բարձրտեխնոլոգիական միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս կարճ ժամանակում կատարելու ուժերի և միջոցների տարաշարժ՝ բազմոլորտ փոխգործության հաշվառմամբ:

Զորքերի գործողությունների հանկարծակիությունը օպերացիայի նախապատրաստման և վարման հաջողության վրա ազդող ամենակարևոր գործոններից մեկն է, որն ապահովվում է ծածուկության, օպերատիվ ու մարտավարական հանկարծակիության հասնելու միջոցով:

Ռազմական գործողությունների պատրաստման *գաղտնիությունը* այն միջոցառումների համախումբն է, որոնք ուղղված են հակառակորդից յուրային մտադրությունների, պլանների և իրական նպատակների թաքցմանը: Այս միջոցառումները ձեռնարկվում են, որպեսզի դժվարացնեն կամ բացառեն յուրային գործողությունների հայտնաբերումը և ըմբռնումը, գործունեության ուղղվածությունը և պայմանները, ապահովեն հակառակորդի խոցման միջոցներից պաշտպանությունը, ստեղծեն հանկարծակիության հասնելու համար անհրաժեշտ պայմաններ, ինչը հիմնականում ձեռք է բերվում հակառակորդի մոլորեցման և գործողությունների արագության միջոցով:

Զորքերով, միջոցներով ու կրակով վճռորոշ տարաշարժը մի սկզբունք է, որն ապահովվում է վճռական տեղաշարժով, իրադրության փոփոխություններին արձագանքելու ճկունությամբ, շարժունակության և արագության օգտագործմամբ՝ որպես հակառակորդի ավելի ծանր կամ դանդաղաշարժ զենքի դեմ, հակառակորդի զորքերի օպերատիվ դասավորվածքի ամբողջ խորությամբ հզոր կրակային հարվածներով՝ գլխավոր հարվածի ուղղությունը փոխելու կամ ուժերը ակնթարթորեն տեղափոխելու ունակությամբ:

Պահուստների վաղօրոք ստեղծման, հմուտ օգտագործման ու ժամանակին վերականգնման սկզբունքի էությունն են անհրաժեշտ պահուստային ուժերի կանխատեսումն ու նախապես ստեղծումը, դրանց նպատակային և պատեհաժամ կիրառումը՝ հանկարծակիության հասնելու, հարվածային ուժերի աճումն ու հաջողության զարգացումն ապահովելու, հակահարձակումը (հակահարվածը) հետմղելու կամ բնագծերը վերականգնելու համար:

Ձեռք բերված հաջողության ամրապնդումը ևս մնում է կարևոր սկզբունք: Մարտավարական կամ օպերատիվ հաջողության հասնելուց հետո անհրաժեշտ է ժամանակին և վճռականորեն գործել՝ ձեռք բերված արդյունքները ամրապնդելու և օպերացիաների շարունակման համար կայուն պայմաններ ստեղծելու նպատակով: Սկզբունքի էությունը ձեռք բերված առավելության արագ ու վճռական զարգացումը և ընդլայնումն է՝ հիմնական ուղղություններում ուժերի և միջոցների ժամանակին ավելացմամբ, գրաված բնագծերի կայուն պաշտպանության և պահպանման ապահովմամբ, ինչպես նաև հուսալի կրակային, հետախուզական, նյութատեխնիկական և հոգեբանական ապահովմամբ արդյունքները պահպանելու և հետագա գործողությունները նախապատրաստելու նպատակով:

Օպերացիաների ու մարտական գործողությունների համակողմանի ապահովումը օպերացիաների նախապատրաստման և իրականացման ընթացքում զորքերի մարտունակության և կայուն կառավարման շարունակական պահպանման միջոցառումների կազմակերպումն ու իրականացումն է:

Սկզբունքը ներառում է փոխկապված համապարփակ և շարունակական միջոցառումների համալիրը, որն ընդգրկում է մարտական, տեխնիկական, բժշկական, բարոյահոգեբանական և թիկունքային ապահովման ոլորտները: Այդ ապահովումները կազմակերպում և համակարգում է հրամանատարությունը ինչպես օպերացիայից առաջ, այնպես էլ դրա ընթացքում: Այս միջոցառումներն ուղղված են զորքերի մարտունակության, կայունության և իրադրության փոփոխություններին հարմարվելու կարողության պահպանմանը:

Զորքերի մարտունակության պահպանման ու ժամանակին վերականգնման սկզբունքը օպերացիաների կայունության և արդյունավետության հիմնարար տարրն է, որն ապահովում է խնդիրների կատարումը ցանկացած իրավիճակում: Դա մշտական միջոցառումների համալիր համակարգ

է՝ սկսած համալրումից, նյութատեխնիկական ապահովումից մինչև ուսուցում, հոգեբանական աջակցություն և պաշտպանություն, որի գործունեությունն ուղղված է կորուստներից հետո կառավարումը, տեխնիկան, անձնակազմի թվակազմը և բարոյահոգեբանական վիճակը վերականգնելուն, և որն անընդհատ կազմակերպում և ղեկավարում է հրամանատարությունը մինչ օպերացիան, դրա ընթացքում և դրանից հետո, որպեսզի ապահովվի զորքերի կայունությունը և պատրաստականությունը խնդիրների կատարմանը:

Բարոյահոգեբանական գործոնի մշտական հաշվառումն ու հմուտ օգտագործումը դիտվում է որպես կենսականորեն կարևոր և զորքերի մարտունակության ապահովման անբաժանելի բաղադրիչ, որը զգալի ազդեցություն է ունենում օպերացիաների հաջողության վրա:

Սկզբունքով նախատեսվում են անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի ձևավորման, պահպանման և կառավարման համակարգված, ակտիվ ու շարունակական աշխատանքներ, որոնց ժամանակ օգտագործվում է գաղափարախոսական, դաստիարակչական և հոգեբանական աջակցությունը՝ ինտեգրված ապահովման այլ տեսակների հետ և ուղղված զորքերի կամքի, կայունության, համախմբվածության և հոգեբանական պատրաստության ամրապնդմանը բարդ պայմաններում խնդիրների կատարման համար:

Զորքերի հաստատուն և անընդհատ կառավարման սկզբունքի էությունը բոլոր ուժերի ու միջոցների ժամանակին և հուսալի կառավարման ապահովումն է օպերացիաների նախապատրաստման ու վարման ընթացքում և որը կատարվում է անկախ իրադրության փոփոխությունից, օրվա ժամից, հակառակորդի գործողություններից կամ տեղանքի բնույթից: Դրա հիմնական նպատակն է ապահովել զորքերի տարրերի միջև մեծ արդյունավետությամբ փոխգործություն և փոխհամաձայնեցվածություն, ինչի շնորհիվ զորքերն արագորեն կարձագանքեն իրավիճակի փոփոխություններին, որոշումներն կընդունվեն և կիրագործվեն առանց ուշացումների, կապի խափանումների, կիբեռհարձակման պայմաններում կպահպանվի կառավարելիությունը և այլն:

ԱՄՆ-ի ԶՈՒ-ի համատեղ օպերացիաների սկզբունքները

Համատեղ օպերացիաներին վերաբերող դոկտրինալ դրույթները ներկայացված են առանձին փաստաթղթում, որտեղ շարադրված է, թե ինչպես են զինված ուժերի տարբեր տեսակներ, միմյանց հետ փոխգործելով, միասին վարում օպերացիաներ: Համատեղ օպերացիաների սկզբունքները ձևավորվում են պատերազմի ավանդական սկզբունքների հիման վրա, սակայն պարտադիր չէ, որ դրանք բոլորը միաժամանակ կիրառվեն: Եվ այսպես. համատեղ օպերացիաների սկզբունքներն են[4].

[4] Տես “Joint Publication 3-0. Joint Operations”, 17 January 2017, Incorporating Change 1, 22 October 2018, PP. A-1- A-4 (https://irp.fas.org/doddir/dod/jp3_0.pdf):

- **նպատակի որոշում** *(objective)*

Ռազմական օպերացիաների նպատակն է հասնել այն կոնկրետ նպատակակետերին, որոնք սահմանված ընդհանուր ռազմավարական նպատակների իրագործման համար կնպաստեն հակամարտության լուծմանը, որը հաճախ ներառում է հակառակորդի կարողությունների և կռվելու կամքի ոչնչացումը: Յուրաքանչյուր օպերացիա պետք է նպաստի ռազմավարական նպատակների իրագործմանը,

- **հարձակման գերակայություն** *(offensive)*

Հարձակողական գործողության նպատակն է տիրել նախաձեռնությանը, պահպանել և օգտագործել այն: Հարձակողական գործողությունը հստակ կերպով սահմանված նպատակին հասնելու ամենաարդյունավետ և վճռական միջոցն է: Դրա շնորհիվ ռազմական ուժը տիրում է և պահպանում նախաձեռնությունը՝ միևնույն ժամանակ պահպանելով գործողությունների ազատությունը և հասնելով վճռական արդյունքների: Հարձակողական գործողության կարևորությունը հիմնարար է պատերազմի բոլոր մակարդակներում, իսկ պաշտպանությունը դիտվում է միայն որպես ժամանակավոր միջոց, և անհրաժեշտ է փնտրել յուրաքանչյուր հնարավորություն՝ նախաձեռնությանը տիրելու կամ այն վերականգնելու համար,

- **զանգվածայնություն** *(mass)*

Զանգվածայնության նպատակն է մարտական հզորության ազդեցությունները կենտրոնացնել ամենանպաստավոր վայրում և պահին՝ վճռական արդյունքներ ստանալու համար: Դրան հասնելու համար համատեղ ուժերի համապատասխան կարողությունները ինտեգրվում և համաժամանակացվում են այն տեղում, որտեղ կարճ ժամանակահատվածում կգործեն վճռական ազդեցություն: Ցանկալի արդյունքի հասնելու համար զանգվածայնությունը հաճախ պետք է հաստատունորեն պահպանվի: Ոչ թե ուժերի կենտրոնացումը, այլ մարտական հզորության ազդեցությունների զանգվածայնացումը կարող է հնարավորություն տալ նույնիսկ թվապես զիջող ուժերին վճռական արդյունքների հասնելու և նվազագույնի հասցնելու մարդկային կորուստներն ու ռեսուրսների վատնումը,

- **տարաշարժում** *(maneuver)*

Տարաշարժի նպատակն է մարտական հզորության ճկուն կիրառման միջոցով հակառակորդի համար ստեղծել անբարենպաստ պայմաններ: Տարաշարժը թշնամու նկատմամբ ուժերի տեղաշարժն է՝ դիրքային առավելություն ապահովելու կամ պահպանելու համար, սովորաբար՝ տարաշարժվող ուժի ուղղակի և անուղղակի կրակային հարված հասցնելու կամ դրա սպառնալիք ստեղծելու նպատակով: Արդյունավետ տարաշարժը թշնամուն անհավասարակշիռ վիճակում է պահում և էապես նպաստում է հաջողությունների զարգացմանը, գործողությունների ազատության պահպանմանը և խոցելիության նվազեցմանը՝ շարունակաբար նոր խնդիրներ ստեղծելով թշնամու համար,

- **ուժերի տնտեսում** *(economy of force)*

Ուժերի տնտեսման նպատակն է երկրորդական ջանքերի վրա ծախսել նվազագույն անհրաժեշտ մարտական հզորություն՝ հիմնական ջանքերին առավելագույն հնարավոր մարտական հզորություն հատկացնելու համար:

Ուժերի տնտեսումը դրանց խելամիտ կիրառումն ու բաշխումն է: Դա առկա մարտական հզորության կշռադատված հատկացումն է այնպիսի խնդիրների կատարմանը, ինչպիսիք են սահմանափակ գրոհները, պաշտպանությունը, խաբկանքը կամ նույնիսկ նահանջի գործողությունները՝ վճռական կետում և ժամանակին այլ տեղում զանգվածայնության հասնելու համար,

- **միանձնյա հրամանատարություն** *(unity of command)*

Միանձնյա հրամանատարության նպատակն է ապահովել ջանքերի միասնականությունը յուրաքանչյուր նպատակի համար մեկ պատասխանատու հրամանատարի իշխանության ներքո: Ընդսմին նա ունի ընդհանուր նպատակի իրագործման համար կիրառվող բոլոր ուժերը ղեկավարելու լիազորություններ: Ջանքերի միասնացումը, համակարգումը և համագործակցությունը ընդհանուր նպատակներին հասնելու ուղղությամբ հաջող միասնական գործողության արդյունք են,

- **անվտանգության ապահովում** *(security)*

Անվտանգության ապահովման նպատակն է կանխել անսպասելի առավելության հասնելու հակառակորդի հնարավորությունը: Դա մեծացնում է գործողությունների ազատությունը՝ նվազեցնելով բարեկամական ուժերի խոցելիությունը հակառակորդի գործողությունների, ազդեցության կամ հանկարծակիության նկատմամբ: Անվտանգությունը իրենց ուժերը, բնակչությանը կամ այլ կարևոր գերակայություններ պաշտպանելու համար հրամանատարների ձեռնարկած միջոցառումների արդյունք է: Շտաբային պլանավորումը և թշնամու ռազմավարության, մարտավարության ու դոկտրինի ըմբռնումը մեծացնում են անվտանգությունը: Այս սկզբունքի կիրառումը նպաստում է ոչ թե անտեղի զգուշավորությանը, այլ ռիսկերի խելամիտ կառավարմանը,

- **հանկարծակիություն** *(surprise)*

Հանկարծակիության նպատակն է հարվածել այն ժամանակ կամ վայրում կամ այն եղանակով, որին թշնամին պատրաստ չէ: Հանկարծակիությունը կարող է հրամանատարին օգնել փոխելու մարտական հզորության հավասարակշռությունը և հասնելու հաջողության: Հանկարծակիությանը նպաստող գործոններն են՝ որոշումների կայացման, տեղեկույթի փոխանակման և ուժերի տեղաշարժի արագությունը, արդյունավետ հետախուզությունը, խաբկանքը, անսպասելի մարտական հզորության կիրառումը և մարտական գործողությունների մեթոդների փոփոխությունները,

- **պարզություն** *(simplicity)*

Պարզության նպատակն է մեծացնել այն բանի հավանականությունը, որ պլաններն ու գործողությունները կիրագործվեն ինչպես նախատեսված է: Այն նպաստում է գործողությունների հաջողությանը: Պարզ պլանները և հստակ, հակիրճ հրամանները նվազագույնի են հասցնում թյուրիմացությունն ու շփոթությունը: Պլանների պարզությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու և պլանավորելու կատարումը բոլոր օղակներում,

- **զսպվածություն** *(restraint)*

Զսպվածության նպատակն է կանխել ուժի անհարկի կիրառումը: Զսպվածության համար պահանջվում է ռազմական գործողությունների, անվտանգության ապահովման անհրաժեշտության և ազգային նպատակների հաշվեկշռում: Չափազանց մեծ ուժի կիրառումը վնասում է այն կիրառող կազմակերպության օրինականությանը՝ միևնույն ժամանակ հավանականորեն մեծացնելով հակառակորդ կողմի օրինականությունը: Մարտական գործողությունների վարման կանոնները կարող են նպաստել պատշաճ զսպվածությանը,

- **համառություն** *(perseverance)*

Համառության նպատակն է ապահովել ազգային նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նվիրվածությունը և չափավորված, երկարատև ռազմական գործողությունների նախապատրաստումը: Որոշ համատեղ գործողություններ կարող են վերջնական նպատակներին հասնելու համար պահանջել տարիներ: Ազգային նպատակների և խնդիրների համբերատար, վճռական և հետևողական իրագործումը հաճախ էական է հաջողության հասնելու համար: Այն հաճախ ներառում է դիվանագիտական, տնտեսական և տեղեկատվական միջոցառումներ՝ ի լրումն ռազմական ջանքերի,

- **օրինականություն** *(legitimacy)*

Օրինականության նպատակն է օպերացիաների վարման ընթացքում պահպանել իրավական և բարոյական հեղինակությունը: Օպերացիաներում այն կարող է լինել վճռորոշ գործոն, որը հիմնված է իրական և ընկալվող օրինականության, բարոյականության և արդարացիության վրա: Ներգրավված ուժերը պետք է պահպանեն օպերացիայի օրինականությունը: Օրինականությունը կարող է պայմանավորված լինել միջազգային հանրության հետ համաձայնեցված նպատակներին հավատարմության պահպանմամբ, ընդսմին այն բանի հաշվառմամբ, որ տվյալ օպերացիան համապատասխանում է իրավիճակին: Ուժի կիրառման սահմանափակումը, քաղաքացիական անձանց պաշտպանությունը և ներգրավված ուժերի կարգապահ վարքի ապահովումը կարող են ամրապնդել օրինականությունը:

ՌԴ ԶՈՒ-ի օպերատիվ արվեստի սկզբունքները	ԱՄՆ-ի ԶՈՒ-ի համատեղ օպերացիաների սկզբունքները	Ծանոթություն
Զորքերի մարտական ու զորահավաքային պատրաստության պահպանում		Այն ուղղված է ուժերի ֆիզիկական, հոգեբանական և կազմակերպական պատրաստության պահպանմանը, ինչը երաշխավորում է արագ արձագանքումը և օպերատիվ կայունությունը: ԱՄՆ-ում համարժեք սկզբունք չկա, թեև որոշ գաղափարական համընկնումներ առկա են «Համառություն» սկզբունքում: Այն շեշտում է գործողությունների շարունակականության ապահովումը և ուժերի հետևողական կիրառումը մինչև ռազմաքաղաքական նպատակներին հասնելը: Այս համատեքստում կարելի է նշել, որ ՌԴ մոտեցումը ավելի գործնական ու կառավարչական է՝ կենտրոնացած զորքերի օպերատիվ գործարկման համար դրանց բարձր մակարդակի պատրաստության պահպանման վրա, մինչդեռ ամերիկյան սկզբունքով առավելապես շեշտվում են ջանքերի շարունակականությունն ու ռազմավարական հետևողականությունը:
	Նպատակի որոշում	Այս սկզբունքը որպես առանձին, համակարգող գաղափար ռուսական օպերատիվ արվեստում չկա, սակայն դրա տարրերն առկա են պլանավորման, կառավարման կազմակերպման և հրամանատարական նպատակայնության դրույթներում:
Գործողությունների ակտիվություն ու վճռականություն	Հարձակման գերակայություն	ՌԴ այս սկզբունքը բովանդակային առումով համապատասխանում է ԱՄՆ-ի «Հարձակման գերակայություն» սկզբունքին: Այն կարելի է համարել դրանց միջև ամենամոտ և ուղղակի համարժեքությունը թե՛ նպատակի, թե՛ կիրառման տրամաբանության տեսանկյունից:
Վճռորոշ պահին գլխավոր ուղղություններում և կարևոր խնդիրների լուծման համար ջանքերի կենտրոնացում	Զանգվածայնություն	Այս սկզբունքները համապատասխանում են թե՛ նպատակային բովանդակությամբ, թե՛ գործառական կիրառությամբ: Միակ տարբերությունն այն է, որ ԱՄՆ-ում կիրառվող «Զանգվածայնություն» հասկացությունն ավելի լայն է, քանի որ ներառում է ոչ միայն ֆիզիկական կենտրոնացում, այլև ազդեցությունների համակցություն:
Զորքերով, միջոցներով ու կրակով վճռորոշ տարաշարժ	Տարաշարժ	Այս սկզբունքներն ամբողջովին համընկնում են: Սակայն ՌԴ մոտեցման դեպքում տարաշարժն ավելի լայն է ընկալվում՝ ներառելով ոչ միայն տեղաշարժը, այլև համաժամանակյա կրակային ազդեցությունը:

Պահուստների վաղօրոք ստեղծում, հմուտ օգտագործում ու ժամանակին վերականգնում	**Ուժերի տնտեսում**	ՌԴ այս սկզբունքին ամենամոտ ամերիկյան սկզբունքը «Ուժերի տնտեսումն» է, որը պահանջում է ռեսուրսների խելամիտ և նպատակայնորեն ուղղորդված բաշխում՝ առաջնահերթությունների հիման վրա: Միևնույն ժամանակ, պահուստների վերականգնման պահանջը որոշ չափով աղերսվում է «Համառություն» սկզբունքի հետ, որով ենթադրվում է ուժերի և միջոցների պահպանման ու գործարկման հետևողականություն՝ ընդհուպ մինչև ռազմաքաղաքական նպատակների իրագործումը: Այս համատեքստում կարելի է եզրակացնել, որ թե՞ ՌԴ, թե՞ ԱՄՆ-ի դոկտրինալ մոտեցումներում պահուստների խնդիրը դիտվում է որպես օպերատիվ ճկունության ապահովման միջոց:
Զորքերի հաստատուն և անընդհատ կառավարում	**Միանձնյա հրամանատարություն**	ՌԴ օպերատիվ արվեստի այս սկզբունքը օպերացիաների կայունության ապահովման առանցքային բաղադրիչներից է: Դրան ամերիկյան մոտեցումներից առավել մոտ է «Միանձնյա հրամանատարություն» սկզբունքը, որն ապահովում է միավորված հրամանատարություն և հստակ պատասխանատվություն համատեղ օպերացիաների կառավարման համար: Սակայն, եթե ամերիկյան մոտեցումը կենտրոնացած է հրամանատարության կառուցվածքային ձևավորման և ենթակայության պարզության վրա, ապա ռուսաստանյան մոտեցումը լրացուցիչ կերպով ընդգրկում է նաև տեխնիկական ու գործառական բաղադրիչները, մասնավորապես՝ կապի պաշտպանվածության, կառավարման հուսալիության և անխափանության ապահովումը: Այսպիսով՝ երկու մոտեցումներն էլ շեշտադրում են արդյունավետ կառավարումը՝ որպես օպերատիվ հաջողության կարևոր նախապայմանի, սակայն ՌԴ մոտեցումն ավելի ընդգրկուն է՝ ներառելով ոչ միայն հրամանատարական, այլև տեխնոլոգիական ու կազմակերպական մեխանիզմները:
Զորքերի գործողությունների հանկարծակիություն	**Հանկարծակիություն**	ՌԴ օպերատիվ արվեստի տվյալ սկզբունքը բովանդակային առումով առադրելի է ԱՄՆ-ի ԶՈՒ-ի համատեղ օպրացիաների դոկտրինում ամրագրված «Հանկարծակիություն» սկզբունքին: Երկու դեպքում էլ դրանց առանցքում հակառակորդի պլանների խաթարումն է անսպասելի, ճկուն և վճռորոշ գործողություններով: Այնուամենայնիվ, եթե ԱՄՆ-ի սկզբունքում որպես հակառակորդի վրա մարտավարական ազդեցություն շեշտադրվում է առաջին հերթին անակնկալի գործոնը, ապա ՌԴ մոտեցումում ավելի մեծ չափով շեշտվում է հանկարծակիության ապահովումը օպերատիվ-մարտավարական խորությամբ, այդ թվում՝

		ներառելով հակառակորդի կառավարման համակարգի խափանումը, ապատեղեկատվության կիրառումը և ուժերի վերախմբավորման արագությունն ու քողարկվածությունը: Այսպիսով՝ ռուսական սկզբունքը ներկայացնում է հանկարծակիության ավելի ամբողջական ու համակարգված ընկալում՝ որպես օպերատիվ առավելություն ստեղծող համալիր մեխանիզմի, մինչդեռ ամերիկյան դոկտրինն այն դիտում է որպես օպերացիայի արդյունավետության մեծացման միջոցի:
Զորքերի մարտունակության պահպանում ու ժամանակին վերականգնում	**Համառություն, Անվտանգության ապահովում**	ՌԴ այս սկզբունքը ձևակերպված է որպես օպերատիվ ապահովման և կառավարման համակարգերի ինտեգրման հիմնադրույթ՝ նպատակաուղղված զորքերի շարունակական գործունակության ապահովմանն ու կորուստներից արագ վերականգնմանը: ԱՄՆ-ի դեպքում չկա դրա համարժեքը: Թեև որոշ տարրեր արտահայտված են «Անվտանգության ապահովում», իսկ որոշ տարրեր՝ «Համառություն» սկզբունքում, սակայն բովանդակային ու գործառական ամբողջականությամբ համարժեք սկզբունք չկա:
Բարոյահոգեբանական գործոնի մշտական հաշվառում ու հմուտ օգտագործում		ԱՄՆ-ի ԶՈՒ-ի համատեղ դոկտրինում բարոյահոգեբանական գործոնի դերը դիտարկվում է տարբեր դոկտրինալ փաստաթղթերում, մասնավորապես՝ «Տեղեկատվական գերազանցություն» *(“Information Advantage”),* «Առաջավարություն» *(“Leadership”)* կամ «Հոգեբանական օպերացիաներ» *(“Psychological Operations”)* ենթաբաժիններում: Սակայն սկզբունքների մակարդակով այն՝ որպես առանձին դրույթ, ներկայացված չէ: Մինչդեռ ՌԴ օպերատիվ արվեստում բարոյահոգեբանական բաղադրիչը ներկայացվում է որպես ամբողջական սկզբունք՝ օպերացիայի պլանավորման, անձնակազմի պատրաստման ու մարտունակության պահպանման առանցքային գործոն:
Զորքերի, ուժերի և միջոցների համաձայնեցված կիրառում և սերտ փոխգործություն	**Միանձնյա հրամանատարություն**	ՌԴ օպերատիվ արվեստում այս գաղափարը ձևակերպված է որպես ինքնուրույն սկզբունք, որի նպատակն է տարբեր ուժերի և միջոցների համաժամանակյա, նպատակային և համակարգված ներգրավումը օպերացիայի բոլոր փուլերում: Նշված սկզբունքին ԱՄՆ-ի ԶՈՒ-ի «Համատեղ օպերացիաներ» դոկտրինում առավելագույնս համարժեք է «Միանձնյա հրամանատարություն» սկզբունքը, որը պաշտոնապես ներառված է սկզբունքների ցանկում: Այն ապահովում է ուժերի կառավարման միասնությունը՝ հանձին մեկ պատասխանատու հրամանատարի: «Միանձնյա հրամանատարություն» հասկացությունն իր բովանդակությամբ մոտ է ՌԴ տվյալ

		սկզբունքին, սակայն «Համատեղ օպերացիաներ» փաստաթղթում ներկայացված չէ որպես սկզբունք, այլ միայն որպես օպերացիոն մեթոդաբանական ուղղություն՝ արտահայտված տարբեր բաժիններում: Ուստի, կարող ենք նշել, որ տվյալ հարցում ռուսաստանյան սկզբունքն ավելի ամբողջական է, քանի որ դրանում շեշտվում են ոչ միայն կառավարման միասնությունը, այլև ստորաբաժանումների սերտ գործակցությունը և փոխլրացումը՝ որպես օպերացիայի օպերացիոն արդյունավետության առանցքային պայմանների:
Ձեռք բերված հաջողության ամրապնդում		ՌԴ օպերատիվ արվեստում այս սկզբունքը դիտվում է որպես ամբողջական սկզբունք, որի նպատակն է հակառակորդին զրկել գործելու կարողությունից՝ հաջողության արագ զարգացմամբ և վերջնականապես արդյունքի հասնելով: ԱՄՆ-ի ԶՈՒ-ի «Համատեղ օպերացիաներ» դոկտրինում այս մոտեցումը որպես առանձին սկզբունք ներկայացված չէ: Գաղափարն արտահայտվում է օպերացիայի «Հաջողության զարգացում» *("Exploitation")* և «Հետապնդում» *("Pursuit")* փուլերում՝ որպես ձեռք բերված հաջողության օպերատիվ շարունակականություն: Միևնույն ժամանակ, որոշ առումներով այն առնչվում է «Համառություն» սկզբունքին, որը շեշտում է ջանքերի շարունակականությունն ու նպատակամղվածությունը: Այնուամենայնիվ, կարելի է եզրակացնել, որ ռուսաստանյան մոտեցումը ավելի հստակորեն է ձևակերպում հաջողության ամրապնդումը՝ ներառելով և¢ օպերատիվ գործողությունների զարգացումը, և¢արդյունքի ամրապնդումը:
Օպերացիաների ու մարտական գործողությունների համակողմանի ապահովում		ՌԴ օպերատիվ արվեստի տվյալ սկզբունքը հանդես է գալիս որպես մի ամբողջական համակարգ, որում միավորվում են ապահովման բոլոր բաղադրիչները՝ տեխնիկական, նյութատեխնիկական, բժշկական, հոգեբանական ու կառավարային: ԱՄՆ-ի դեպքում այս մոտեցումը չունի լիարժեքորեն համապատասխանող սկզբունք: Թեև ապահովման դերը կարևորում են բազմաթիվ դոկտրինալ փաստաթղթեր[5] և «Հաստատուն նյութատեխնիկական ապահովում» *("sustainment")* հասկացությունը համարվում է կարևոր գործառույթ, սակայն «Համատեղ օպերացիաներ» փաստաթղթում այն սկզբունքների ցանկում ներկայացված չէ որպես օպերացիոն սկզբունք:

[5] Տես, օրինակ, "JP 4-0. Joint Logistics". DOD, 20 July 2023 (https://www.dau.edu/blogs/newly-updated-joint-logistics-publication-4-0):

		Այս տարբերությունը վկայում է դոկտրինալ մոտեցումներում տարբերությունների առկայությունը. մինչ ՌԴ-ում ապահովման խնդիրը ներառվում է օպերատիվ արվեստի սկզբունքների համակարգում, ԱՄՆ-ում այն դիտվում է որպես առանձին գործառույթ՝ արտացոլված մատակարարման և կառավարման այլ համակարգերում:
	Օրինականություն	ԱՄՆ-ի «Համատեղ օպերացիաներ» փաստաթղթում[6] ամրագրված «Օրինականություն» սկզբունքը համատեղ օպերացիաների օրինականության, բարոյականության և հանրային ընկալման ապահովման առանցքային սկզբունք է, որում շեշտվում են ոչ միայն օպերացիայի իրավական հիմքերը, այլև ներսում և դրսում դրանց ընկալումը որպես արդարացի, օրինավոր ու բարոյապես ընդունելի ձեռնարկում: ՌԴ օպերատիվ արվեստում նմանօրինակ սկզբունք որպես այդպիսին չկա, սակայն որոշ հատկանիշներ առկա են «բարոյահոգեբանական գործոնի հաշվառման և հմուտ օգտագործման» սկզբունքում, որտեղ շեշտը դրվում է զորքերի ներքին համոզվածության, գաղափարական պատրաստության և հոգեբանական կայունության վրա: Ընդսմին կարելի է պնդել, որ ռուսաստանյան մոտեցումն ավելի կենտրոնացած է ուժերի ներքին բարոյահոգեբանական վիճակի վրա, մինչդեռ ամերիկյան սկզբունքն ընդգրկում է օպերացիաների իրավական և ընկալվող արդարության ամբողջ դաշտը, ներառյալ՝ միջազգային իրավունքը, բնակչության վստահությունը և դաշնակիցների աջակցությունը:
	Պարզություն	ԱՄՆ-ի «Պարզություն» սկզբունքը օպերացիաների պլանավորման և իրագործման առանցքային պահանջներից է, որն ուղղված է օպերատիվ գործընթացների միանշանակությանը, հրամանների հասանելիությանը և օպերացիաների արդյունավետ համակարգմանը: ՌԴ օպերատիվ արվեստում այս սկզբունքը որպես առանձին դրույթ ներկայացված չէ: Սակայն դրա տարրերն առկա են «Զորքերի հաստատուն և անընդհատ կառավարում» սկզբունքում, որով ապահովվում է կառավարման հստակությունը և շարունակականությունը ցանկացած իրավիճակում: Այսպիսով՝ թեև ձևակերպման մակարդակում կա որոշակի տարբերություն, բովանդակային առումով ռուսաստանյան մոտեցմամբ պարզության գաղափարը դիտվում է որպես կառավարման կայունության և մարտավարական վստահության նախապայման:

[6] Տես “Joint Publication 3-0. Joint Operations”, 17 January 2017, Incorporating Change 1, 22 October 2018:

	Զսպվածություն	Ամերիկյան փաստաթղթում ամրագրված «Զսպվածություն» սկզբունքը սահմանում է, որ ռազմական ուժը պետք է կիրառվի իրավիճակին համարժեք ձևով: Այս սկզբունքը կարևոր դեր ունի հատկապես այն օպերացիաներում, որտեղ կան քաղաքացիական բնակչության անվտանգության, միջազգային իրավունքի պահպանման և քաղաքական նպատակների ապահովման խնդիրներ: ՌԴ օպերատիվ արվեստում նման սկզբունքը որպես առանձին դրույթ ներկայացված չէ: Այդուհանդերձ, որոշ գաղափարներ, մասնավորապես՝ անձնակազմի բարոյահոգեբանական կայունության ապահովումը և զորքերի հստակ ու շարունակական կառավարումը, անուղղակիորեն նպաստում են գործողությունների վերահսկելիությանն ու որոշակի հաշվեկշռվածությանը: Այս համատեքստում կարելի է եզրակացնել, որ եթե ԱՄՆ-ի ԶՈՒ-ում զսպվածությունը դիտվում է որպես ռազմաքաղաքական և բարոյական չափանիշների պահպանման համար սկզբունքային դրույթ, ապա ՌԴ ԶՈՒ-ում դրա գործառույթները հիմնականում իրագործվում են հրամանատարական մակարդակում՝ որոշումների կայացման և կիրառվող միջոցների ընտրության միջոցով:

Եզրակացություն

Եվ այսպես. ՌԴ «Օպերատիվ արվեստի սկզբունքների» և ԱՄՆ-ի Զինված ուժերի «Համատեղ օպերացիաների» սկզբունքների համեմատական վերլուծությունը վկայում է, որ երկու համակարգերում կիրառվող սկզբունքները ձևավորվել են ռազմարվեստի տարբեր դոկտրինալ մշակույթների, ռազմական պատմական փորձի և ժամանակակից օպերատիվ-ռազմավարական գերակայությունների հիման վրա: Թեև առկա են մի շարք գաղափարական և բովանդակային համընկնումներ, սակայն ակնհայտ է, որ յուրաքանչյուր դոկտրինալ համակարգ ունի յուրահատուկ կառուցվածք և շեշտադրումներ՝ պայմանավորված ռազմավարական մոտեցումների տարբերությամբ:

ՌԴ օպերատիվ արվեստում գերակայում են ուժերի կենտրոնացման, նյութատեխնիկական ապահովման, զորքերի անընդհատ կառավարման և բարոյահոգեբանական կայունության ապահովման սկզբունքները: Դրանք առավելապես նախատեսված են խոշորամասշտաբ ցամաքային գործողությունների համար, որտեղ գերակա են հրամանատարության կայունությունն ու ռեսուրսների համակարգված կիրառումը:

Ի հակադրություն դրան՝ ԱՄՆ-ի օպերատիվ սկզբունքները ձևավորվել են ըստ համատեղ, բազմազգ ու բազմագործառութային միջավայրի պահանջների: Դրանք ներառում են ինչպես դասական ռազմական սկզբունքներ՝

«Զանգվածայնություն», «Տարաշարժ», «Միանձնյա հրամանատարություն», «Նպատակի որոշում», այնպես էլ ռազմաքաղաքական և իրավական բաղադրիչներ՝ «Օրինականություն», «Ճշգրտություն», «Համառություն», «Պարզություն» հասկացությունները: Այս սկզբունքները միտված են ոչ միայն մարտավարական հաջողության, այլև միջազգային օրինականության և քաղաքական նպատակների արդյունավետ իրագործման ապահովմանը: Դրանք արտացոլում են ԱՄՆ-ի Զինված ուժերի համաշխարհային և համագործակցային գործողությունների պահանջները:

Հատկանշական է, որ որոշ սկզբունքներ, որոնք ամրագրված են ամերիկյան փաստաթղթում, որպես առանձին դրույթներ գոյություն չունեն ՌԴ օպերատիվ արվեստի համակարգում: Օրինակ՝ «Օրինականություն» և «Ճշգրտություն» սկզբունքները ռուսաստանյան մոտեցումներում չեն դիտվում որպես կառուցվածքային տարրեր, այլ ենթադրվում են որպես ապահովման միջոցներ կամ հրամանատարության գործառույթներ:

Միևնույն ժամանակ, ՌԴ սկզբունքներում կան այնպիսի բաղադրիչներ, որոնք ԱՄՆ-ի դեպքում հանդես են գալիս ոչ որպես ինքնուրույն սկզբունքներ, այլ որպես օժանդակ հասկացություններ: Օրինակ՝ պահուստների նախապատրաստման և վերականգնման հարցը առնչվում է «Հաստատուն նյութատեխնիկական ապահովում» կամ «Ուժերի տնտեսում» սկզբունքների հետ: Նմանատիպ տարբերություն առկա է բարոյահոգեբանական ապահովման հարցում, որը ՌԴ մոտեցմամբ ունի կառուցվածքային դեր, իսկ ամերիկյան դոկտրինում դիտվում է այլ մեխանիզմների համատեքստում, ինչպիսիք են առաջնորդությունը կամ տեղեկատվական աջակցությունը:

Վերլուծության արդյունքները վկայում են, որ ամերիկյան սկզբունքներն ունեն ավելի շեշտված ռազմավարական ու քաղաքական ուղղվածություն, մինչդեռ ՌԴ սկզբունքները գործնական կողմնորոշիչներ են առավելապես օպերատիվ մակարդակի համար: Այս տարբերությունը բխում է ռազմաքաղաքական միջավայրի, ռազմական գործողությունների հիմնական ռազմավարական ու ռազմաքաղաքական նպատակների և կառավարման համապատասխան համակարգերի առանձնահատկություններից: Սկզբունքների տարաբնույթությունը զգալի ազդեցություն է գործում ռազմական պլանավորման, օպերացիոն ճկունության, որոշումների կայացման, ինչպես նաև համատեղելիության և ուժերի ինտեգրման մակարդակի վրա: Ամերիկյան սկզբունքները նպաստում են դաշնադրային գործողությունների կազմակերպմանը և օպերատիվ պլաններում քաղաքական նպատակների ընդգրկմանը: ՌԴ օպերատիվ արվեստը, ընդհակառակը, կենտրոնանում է ինքնաբավության, ռեսուրսների հստակ կառավարման և կենտրոնացված հրամանատարության ապահովման վրա:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРИНЦИПОВ ОПЕРАТИВНОГО ИСКУССТВА ВС РФ И СОВМЕСТНЫХ ОПЕРАЦИЙ ВС США

А. С. БАГДАНЯН, полковник, кандидат военных наук, старший лектор Центра исследований оперативного искусства НИУО МО РА;
Э. К. САРКИСЯН, полковник запаса, старший ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

Сравнительный анализ принципов оперативного искусства ВС РФ и принципов Совместных операций ВС США показывает, что они сформировались на основе различных доктринальных культур военного искусства, военно-исторического опыта и современных оперативно-стратегических приоритетов. При этом, каждая система, наряду с некоторыми идеологическими и содержательными совпадениями, имеет своеобразные структуру и акцентировки, обусловленные различиями в стратегических подходах.

В оперативном искусстве РФ преобладают принципы концентрации сил, материально-технического обеспечения, постоянного управления войсками и обеспечения морально-психологической устойчивости, которые предусмотрены преимущественно для широкомасштабных сухопутных операций, где приоритетными считаются устойчивость командования и системное использование ресурсов.

Оперативные принципы США были сформированы согласно требованиям совместной, многонациональной и многофункциональной среды и направлены не только на обеспечение тактического успеха, но и на эффективное соблюдение международной законности и осуществление политических целей.

Примечательно, что некоторые принципы, зафиксированные в американском документе, не существуют в системе оперативного искусства РФ как отдельные положения. В то же время в российских принципах есть такие составляющие, которые в случае США выступают не как самостоятельные принципы, а как вспомогательные понятия.

Результаты анализа свидетельствуют о том, что американские принципы имеют более акцентированную стратегическую и политическую направленность, в то время как принципы РФ являются практическими ориентирами, в большей степени рассчитанными на оперативный уровень. Это различие вытекает из особенностей военно-политической среды, основных стратегических и военно-политических целей военных действий и соответствующих систем управления двух государств.

THE PRINCIPLES OF OPERATIONAL ART OF THE RF ARMED FORCES AND US ARMED FORCES JOINT OPERATIONS: COMPARATIVE ANALYSIS

A. S. BAGHDANYAN, Colonel, PhD in Military Sciences, Senior Lecturer, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA; E. K. SARKISYAN, Colonel (Res.), Senior Research Fellow, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA

SUMMARY

The comparative analysis of the principles of operational art of the RF Armed Forces and the principles of Joint operations of the US Armed Forces demonstrates that they have been established on the basis of various doctrinal cultures of military art, military and historical experience, and modern-day operational and strategic priorities. Withal, every system, in addition to a number of convergences in ideology and content, holds a specific structure and accents, determined by differences in strategic approaches.

In the operational art of the RF, prevailing are the principles of concentration of force, logistic support, regular command and control and provision of moral and psychological stability, which are anticipated for large-scale land operations, where stable command and system resource management are preemptive.

The US operational principles (principles of Joint Operations) were established according to the requirements of joint, multi-national, and multi-domain environment, and were targeted not only at ensuring tactical success, but also at the effective adherence to international legitimacy and achievement of political objectives.

It is noteworthy, that a number of principles, secured in the US document, come short in the system of the Russian operational art as particular provisions. Meanwhile, the Russian principles hold such components, which in case of the US are employed not as independent principles, but rather as auxiliary concepts.

The aftermaths of the analysis suggest that the US principles have more highlighted strategic and political focus, while the RF principles are practical guidelines, more geared towards the operational level. This very distinction stems from the peculiarities in the military and political environment, basic strategic, and military and political goals of military actions, and corresponding systems of command and control in those two states.